

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N        Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ»,  
«Ա.Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ», «ԵՐԵՎԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՅՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ  
ՈԶ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԻԴ  
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

-----

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասին և «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Թույլատրել «Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա», «Ա.Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ», «Երևանի պետական համալսարան», «Պետական ճարտարագիտական համալսարան» և «Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություններին` իրենց միջոցների հաշվին հիմնադրել «Հայկական ազգային գրիդ նախաձեռնություն հիմնադրամ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյան

## Ի օ Օ ի ԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաշվողական գրիդը աշխարհագրորեն տարաբաշխված ինֆրակառուցվածք է, որը միավորում է տարբեր տիպի (պրոցեսորներ, օպերատիվ և հիմնական հիշողություններ, հիշասարքեր, տվյալների հենքեր, ցանցեր և մասնագիտացված մարդկային խմբեր), բազմաթիվ ռեսուրսներ: Այդպիսի համակարգերը թույլ են տալիս արդյունավետ օգտագործել առկա ռեսուրսները՝ ապահովելով մասնագետների միասնական աշխատանք: Գրիդ տեխնոլոգիայի պոտենցիալը արդեն գնահատվում է շատ բարձր, որն ունի ռազմավարական բնույթ և մոտ ապագայում կհանդիսանա մարդկության գործունեության տարբեր բնագավառներում բարձր տեխնոլոգիաների զարգացման համար գործիք: Գրիդ տեխնոլոգիաները ակտիվորեն օգտագործվում են ինչպես պետական նշանակություն ունեցող խնդիրների (սեյսմիկա, օդերևութաբանություն, շրջակա միջավայր, արտակարգ իրավիճակներ, պաշտպանություն, ֆինանսական, էներգետիկ, կոմունալ ծառայությունների բնագավառ և այլն), այնպես էլ տարբեր արտադրական և գիտատեխնիկական խնդիրների լուծման համար: Ներկայումս գրիդի կիրառական ոլորտները ընդգրկում են միջուկային ֆիզիկան, շրջակա միջավայրի պաշտպանությունը, եղանակի կանխատեսումը և կլիմայական փոփոխությունների մոդելավորումը, կենսաբանական մոդելավորումը, դեղագործությունը և այլն: Գիտակրթական ինստիտուտներում և համալսարաններում ակտիվորեն զարգանում են տեխնոլոգիաները կապված ինչպես բարձր արտադրողականությամբ հաշվողական համակարգերի ստեղծման և նրանց միավորման (ինչպես մեկ միասնական ռեսուրս) ուղղությամբ, այնպես էլ այդ միջավայրում նորագույն գիտական հետազոտությունների մեթոդների զարգացմամբ քվանտային ֆիզիկայի, աստղաֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, մոլեկուլային դինամիկայի, քիմիական ռեակցիաներում քվանտային քառսի և այլ ոլորտներում:

Այս ուղղությամբ ակտիվ գործունեություն են իրականացնում ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտները: 2004թ. ՀՀ ԳԱԱ Ինֆորամտիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի /ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ/ կողմից ստեղծված

բարձր արտադրողականությամբ հաշվողական կլաստերը առաջին քայլն էր: Հետագայում այդ գործընթացին միացան Երևանի ֆիզիկայի ինստիտուտը, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, Երևանի պետական համալսարանը, ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը և այլ գիտակրթական կենտրոնները: Այդ կազմակերպությունների կողմից համատեղ իրականացրած միջազգային նախագծերի օգնությամբ ստեղծվեց առաջին հայկական գիտակրթական գրիդ ինֆրակառուցվածքը: Միջազգային նախագծերի (ՄԳՏԿ, ԵՄ ՇԾ 7) և պետական նպատակային ծրագրերի շրջանակներում այդ կազմակերպություններում շահագործվում են 7 հաշվողական կլաստերներ բաղկացած 416 հաշվողական միջուկներից:

Այս ոլորտում միջազգային նախագծերի շրջանակներում հայկական կազմակերպությունները համագործակցում են ռուսական և վրացական կազմակերպությունների հետ՝ ստեղծելու հայ-ռուսական և հայ-վրացական գիտակրթական գրիդ սեգմենտներ:

Պետական նպատակային ծրագրի շրջանակներում կատարվում են աշխատանքներ գրիդ միջավայրին միացնելու ՀՀ կառավարության տարբեր ծառայություններ և գերատեսչություններ, որոնք ընդգրկում են կրթության և գիտության, էկոնոմիկայի, արտակարգ իրավիճակների և բնապահպանության ոլորտները:

Հայաստանում գրիդ տեխնոլոգիաների զարգացմանը նպաստելու և համակարգելու համար շահագրգիռ նախարարությունների, գիտակրթական ինստիտուտների և համալսարանների, գերատեսչությունների և ծառայությունների կողմից ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր:

Ներկայումս Հայաստանից գրիդ ինֆրակառուցվածքների զարգացման ուղղությամբ միջազգային նախագծերում հանդես է գալիս ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ-ն: Սակայն, Եվրոպական երկրներում, ինչպես կանոն, ստեղծվում են ազգային գրիդ ասոցիացիաներ, որոնք ներկայացնում են երկիրը միջազգային նախագծերում: Այդ կապակցությամբ, գիտակրթական և այլ ոլորտների վերոնշված խնդիրների լուծման, ինչպես նաև Հայաստանը Եվրոպական ծրագրերում ներկայացնելու համար, առաջարկվում է գրանցել “Հայկական ազգային գրիդ նախաձեռնություն հիմնադրամ”, որի հիմնադիրներն են պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ “Հայաստանի Հանրապետության գտությունների ազգային ակադեմիա”, “Ա.Բ. Ալիխանյանի անվան

Երևանի ֆիզիկայի ինստիտուտ», «Երևանի պետական համալսարան», «Պետական ճարտարագիտական համալսարան», «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ»>>:

Ելնելով վերոշարադրյալից ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա», «Ա.Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ», «Երևանի պետական համալսարան», «Պետական ճարտարագիտական համալսարան» և «Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություններին «Հայկական ազգային գրիդ նախաձեռնություն հիմնադրամ» հիմնադրամ հիմնադրելու թույլատվություն տալու մասին»>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը:



Ա. Աշոտյան